

Մեծապէս շահեկան է ու կարեւոր յաջորդ վկայութիւնը:

«(Նատիր) Ծահը ժամանակ ժամանակ Հայերը ազատ թողուցած է՝ անոնցմէ ստանալով նշանակելի դուժար մը: Սակայն, ասոնք Պարսկաստանի հպատակներ են եւ, ըստ ամէն կամայական կառավարութեանց սովորութեան, վերաբերուած են իրենց Իշխանին (Շահին) կամքին եւ հաճոյից: Եւ, սակայն, ան երբեք որեւէ ճնշում չէ բանեցուցած անոնց ինչքերուն եւ առեւտուրին վրայ: Ու թէեւ Շահին վաճառականապէս էր մինակ զնորդը ամբողջ Գիւլանի մէջ եւ զնեց անոնց ունեցած բոլոր ապրանքը: Սակայն, ան հարիւրին երեք իսկ չզեղչեց այն գինէն իրենց կերպասեղէններուն (այսինքն՝ Հայոց ներածած ապրանքներուն՝ Յ. Ք.) այն գինին վրայ, որով ասոնք ծախած էին Պարսիկ մասնաւոր առեւտրականներուն անցեալ տարի: Եւ անոնց միւս ապրանքներուն համար ան տուաւ յարմար գիներ, ինչ որ ցոյց կուտայ թէ Ծահը զգոյշ է նոյնիսկ Հայերը վախցնելէ առեւտրական կերպով եւ կը ստիպէ իր վաճառականապետը շատ զգոյշ ըլլալ՝ խուսափելու համար ինքզինքին զէմ իրական դանդաղէ:

«Կարճ ժամանակ առաջ Նատիր Ծահին եղբայրը Զանաց ճնշել առեւտրականները, որպէսզի կարենայ ինքզինքին համար նպաստ մը ձեռք բերել: Երբ այդ Ծահին ականջը հասաւ, ան այնքան ծայրայեղօրէն զայրացաւ, որ քիչ մնաց իր եղբոր գլուխը վրայ երթար: Ես կըրնամ շատ ուրիշ նման պարազաներ յառաջ բերել իր առեւտրական հպատակներուն ի նըպաստ իր ընթացքին համար, սակայն ձանձրացուցիչ չըլլալու համար կ'անցնիմ:

«Բրիտանական առեւտրականները կարելի է ապահովցնել, որ պիտի ստանան նոյն բարեացակամութիւնը, ինչ որ Պարսկաստանի մէջ կը վայելն օտար վաճառականներ, կամ անոնցմէ ալ պիտի նախընտրուին: Ամէն պատճառ կայ ակնկալելու այդ, որովհետեւ ոչ մէկ ուրիշ վաճառականներ կրնան Պարսկաստանի հիւսիս-արեւելեան մասը հայթայթել այս ապրանքները, որոնց համար այնքան պահանջ կայ, այսքան զիւրամատչելի գիներով, կամ

թէ ի վիճակի են այսքան վճարել իրենց մետաքսին: Ասոր քաջ ծանօթ են Հայերն ու Պարսիկները, որ կը վախցնէ առաջինները եւ մեզի բարեկամ կ'ընէ վերջինները»:¹⁾

Էլթըն կը տեղեկացնէ թէ՝ «Ռէչտ որովհետեւ Գիւլանի միակ մետաքսի հրապարակն է, հայերը այդ քաղաքը իրենց գլխաւոր շուկան ըրած են եւ այս պատճառով է, որ Ռուս նաւերը Աստրախանէն որոնք կը փոխադրեն հայերն ու իրենց ապրանքները, կուգան էնդէլի, որ Ռէչտի նաւահանգիստն է»:³⁾

Էլթընի Ուղեգրութեան զանազան մասերը ներկայացուցած եմ արդէն, որով աւելորդ կը սեպեմ վերստին կրկնել:

Իբր վերջաւորութիւն հոս կուտամ Hon. George M. Curzon-ի վերլուծական ամփոփումը Կասպեան առեւտրական հրապարակին տիրանալու եւ հայերը չէզոքացնելու անգլիական այս երկրորդ ձեռնարկին:

«Բրիտանական կառավարութիւնը Ռուսական իշխանութեանէն թոյլտուութիւն ստացած էր Վոլկայի վրայ Ղազանի մէջ երկու նաւեր շինելու: 1742-ին այս երկու նաւերը ջուրը իջեցուցան: Էլթըն, որ առաքելութեան գլուխը նշանակուած էր, նաեւ «Էմբրէս օֆ Ռուսիա» նաւով, որուն նաւապետն էր Վուտրուֆ: Երկրորդ նաւով, որ «Էլիզաբէթ» կը կոչուէր, Կիւլպէրը Պէրի նաւապետութեամբ նաեւցին մնացեալ ներկայացուցիչները՝ ձէյմա Պրաուն, Մարդին Վան Միլյոսպ եւ Ռիչարտ Ուելտըր: Ետևով նախանձ ծագեցաւ երկու խումբերուն միջեւ, գլխաւորաբար անպայ եւ անսանձ զայրոյթին պատճառաւ Էլթընի, որ 1743 յունուարին, առանց որեւէ զիմումի կամ թոյլտուութեան Ընկերութեանէն, Նատիր Ծահի ծառայութեան մէջ մտաւ իբր Կասպեան նաւաչէն: Առնելով «Էմբրէս օֆ Ռուսիան», որ նախապէս առեւտր. ուղեւորութիւններ կատարած էր Ռէչտի, Բազուի եւ Տէրպէնտի միջեւ, ան զնաց Կասպեան ծովի արեւելեան եզրերէնը հետադադարէն մինչեւ Պալքան Ծոցը: Իր ընթացքի մասին լուրերը Ս. Պետեր-

1) Անդ. էջ 43-45:

2) Անդ. էջ 62: